

Մամլո հաղորդագրություն N 07/276  
26.11. 2007 թ.

Արժույթի Միջազգային Հիմնադրամն ավարտում է ԱԿՏԱ ծրագրի հինգերորդ ամփոփումը և Հայաստանի Հանրապետությանը տրամադրում 5.2 միլիոն դոլարի վարկ

ԱՄՀ-ի գործադիր խորհուրդը ավարտեց Հայաստանի Հանրապետության տնտեսական ցուցանիշների հինգերորդ դիտարկումը Աղքատության կրճատման և տնտեսական աճի եռամյա ծրագրի ներքո (տես՝ Մամլո հաղորդագրություն N 05/123): Գործադիր խորհուրդը նաև բավարարեց հարկերի հայտարարագրման գծով 2007 թ. դեկտեմբերի վերջի համար կառուցվածքային չափանիշի փոփոխության մասին խնդրագիրը: Դիտարկման ավարտը թույլ է տալիս պայմանագրի շրջանակներում Հայաստանին տրամադրել ևս 3.28 միլիոն ՍԴՌ (շուրջ 5.2 միլիոն դոլար): Արդյունքում ծրագրի ընդհանուր հատկացումը կկազմի 19.68 միլիոն ՍԴՌ (շուրջ 31.4 միլիոն դոլար):

ԱԿՏԱ-ն ԱՄՀ-ի արտոնյալ պայմաններով տրվող վարկ է ցածր եկամուտներ ունեցող երկրների համար: ԱԿՏԱ-ի կողմից աջակցվող ծրագրերը հիմնված են երկրի հասարակության և զարգացման գործընկերների լայն մասնակցությամբ մշակված աղքատության կրճատման ռազմավարությունների վրա, որոնք արտացոլված են Աղքատության կրճատման ռազմավարական ծրագրում: Դա նպատակ է հետապնդում ապահովելու, որպեսզի ԱԿՏԱ-ի կողմից աջակցվող ծրագրերը համապատասխանեն մակրոտնտեսական, կառուցվածքային և սոցիալական քաղաքականությունների համապարփակ շրջանակներին՝ տնտեսական աճի և աղքատության կրճատման նպատակով: ԱԿՏԱ վարկերը տրամադրվում են տարեկան 0.5 տոկոսով և ենթակա են վերադարձի 10 տարի հետո 5.5 տարվա հետաձգմամբ մայր գումարի վճարման գծով:

Գործադիր խորհրդի Հայաստանյան քննարկումների ավարտից հետո ԱՄՀ-ի Փոխտնօրեն և խորհրդի նախագահի պաշտոնակատար պարոն Մուրիլո Պորտուգալը հայտարարեց.

«Հայաստանը շարունակում է օգուտ քաղել երկնիշ տնտեսական աճից, ցածր սղաճից, ցածր հարկաբյուջետային պակասուրդից և բարենպաստ պահուստային դիրքից: Ավելին, զգալի առաջընթաց է արձանագրվել աղքատության կրճատման գծով: Մեծ չափերի մասնավոր դրամական փոխանցումները մեղմացրել են արագ աճող ներմուծման ազդեցությունը ընթացիկ հաշվի պակասուրդի վրա: Միջնաժամկետ հեռանկարը դրական է և առկա են բարենպաստ պայմաններ ներդրումների համար»:

«Ողջամիտ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները կերաշխավորեն մակրոտնտեսական կայունությունը և արտաքին մրցունակությունը մեծածավալ արտաքին ներհույքերի և աճող սղաճային ռիսկերի պայմաններում: Հայաստանի Կենտրոնական բանկը որդեգրել է դրամավարկային քաղաքականության խստացման քաղաքականությունը՝ սղաճը զսպելու համար, միևնույն ժամանակ պահպանելով ձկուն փոխարժեքային ռեժիմը»:

«Կենսաթոշակային բարեփոխման հետ կախված ծախսային ճնշումները և ներմուծվող գազի գների հնարավոր աճը առաջացնում են միջնաժամկետ հարկաբյուջետային ռիսկեր, ուստի պահանջվում է եկամուտների հավաքագրման բարելավում և ծախսերի դասակարգում ըստ առաջնահերթությունների: Հատկապես կարևոր կլինի հարկեր-ՀՆԱ գործակցի թափանցիկ և առանց խտրականությունների ավելացումը, որը թույլ կտա միջոցներ կուտակել երկրի ենթակառուցվածքային կարիքների և աղքատության հետագա կրճատման համար»:

«Իշխանությունները մտադիր են շարունակել կառուցվածքային բարեփոխումների ծրագրի իրականացումը և վերացնել լայնածավալ տնտեսական աճին խանգարող վերջին խոչընդոտները: Արտաքին մրցունակության բարելավման համար կարևոր են ներքին մրցակցության և արտադրողականության բարձրացման միտված քաղաքականությունները: Հարկային վարչարարության բարելավման ծրագիրը կնպաստի հարկային խուսափումների կրճատմանը և գործարար միջավայրի բարելավմանը», ասաց պարոն Պորտուգալը: